քաց, և էառ զմի մասն նորին 'ի պարգեւս, և 'ի մաքրել զհող տեղւոյն երեւելեան հնութիւնք, և արձանագրութիւնք այլ և այլ ազգաց, և բնկոր ինչ մարմարիոն քարի Հայեցի տառիւք։ Իսկ մնացեալ մասն կայ մնայ աւերակ 'ի ձեռս Ցունաց։

Եւ 'ի ժամանակս չինութեան պարսպին՝ մնացին արտաքոյ վանօրայք Ս. Փրկչի և Ս. Սիոնի, լուեալ զայս արքային Սիւլէյմանայ ծանրացաւսումն եղեւ, մինչեւ հրամայել զխափանել զմարտարապետ նորին։

Ի ժամանակս իշխանութեան Սուլթանացն Եգիպտոսի աւերեալ էր 'ի տեղիս տեղիս մզկիթն Օմարայ, և 'ի սմին ժամանակի պէտս ունէր նորոգութեան. զայն եւս հրամայեաց արքայն Սիւլէյման։ Սակայն գործաւորք եւ այլազգիք քակեալ 'ի բաց հանին զմարմարիոն սալս յատակէ ԲեթղեհԷմի եկեղեցւոյն, բարձին նաեւ զսիւնս, և նոքօք նորոգեցին զմզկիթն, կամէին առնուլ և զքարինս յայրէն Մննդեան. բայց լուսաբարք վաղ զգացեալ, խորտակեալ անպիտանացուցին, որպէս երեւին ցարդ։

Իսկ Խրամ Սուլթան մին 'ի սիրուհեաց Սիւլէյմանայ՝ չինեաց հիւրանոցս Թէֆէյ յերուսաղէմ. և սահմանեաց 'ի պէտս նորա գիւղս և ագարակս, որ կոչի Ասահքի Սուլթան վագըֆի. եւ զդուռն տաճարին Ս. Յարութեան եհամուտ նմին. կարգեալ դռնապանս յայլազգեաց. Լատինք որք ոչ էին ընդ իշխանութեամբ Սուլթանին, հատուցանէր այր իւրաքանչիւր 14 դահեկան. Յոյնք 7. Հայք 5. Արարացիք Ասորեաց և եգիպտոսի 3. իսկ 'ի Հապեշաց եւ 'ի Վրաց չառնոյր ինչ. ասեի առն Յոյնք՝ թէ էանց բանալի դրանն 'ի ձեռս այլազգեաց եւ պատճառս այսմ դնեն զԵրեմանոս Պատրիարքն իւրեանց։

Ասորւածատուր եպիսկոպոս Մարտինցի վարեաց զիշխանութիւն Պատրիարքութեան Ամմասայն Երուսաղէմի զամս 10. եւ 'ի պատճառս ծերութեան իւրոյ գոլով անձեռնհաս 'ի գործ կառավարութեան, եաս հանել հրովարտակ յարքունուստ 'ի կենդանութեան իւրում, եւ ինքն հաճութեամբ միաբանից էջ յաթոռայն, և փոխանակ նորա ընտրեցին զԱնդրեաս եպիսկոպոս որդի Աբրահամու, որդի հօրեղբօր ծերունւոյն Ասորւածատրոյ. Թէպէտեւ Անդ-